ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 89

ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սամվել Փիլիպոսյանի /հիմք Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 26.01.2016թվականի վճիռ/ դիմումը, որով խնդրել է ճանաչել իր սեփականության իրավունքը հատկացված հողամասից ավել օգտագործվող հողամասի նկատմամբ և օրինական ճանաչել իր կողմից Կոտայք մարզի Ակունք համայնքի Եկեղեցու փողոց թիվ 6 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տունը և զուգարանը:

Համայնքի կադաստրային քարտեզի,<<ԳԻՍ-ԱՐՏ>> ՍՊԸ կողմից տրամադրված չափագրումների և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Սամվել Փիլիպոսյանին սեփականության իրավուքով պատկանող հողամասում 1984 թվականից կառուցված է բնակելի տուն՝ 113.6քմ և 2015 թվականին կառուցված 1.95քմ զուգարան: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդված 2-րդ կետը,ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8,10,11,21.1 և 22-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով, որ Սամվել Փիլիպոսյանին սեփականության իրավունով պատկանող մարզ Կոտայք մարզ ,համայնք Ակունք Եկեղեցու փողոց թիվ 6 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տան և զուգարանիպահպանումը չի խախտում այլ անձանց իրավուքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառոցված չեն քաղաքաշինության նորմերի էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.որոշում եմ

1.Ս.Փիլիպոսյանին հատկացված՝0,16հա հողամասից մինչ 20% ավել օգտագործվող 0,020հա հողամասի նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը:

2.Կոտայք մարզ ,համայնք Ակունք Եկեղեցու փողոց թիվ 6 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տուն՝ 113.6քմ և 1.95քմ զուգարանը ճանաչել օրինական:

3.Որոշման 1 կետում նշված ինքնակամ կառույցված զուգարանի օրինականացման համար համայնքային բյուջե /հաշիվ 900105203211/ վճարել 1521 դրամ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 18 թ. մայիսի 31 գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 90

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 13 ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ, ՆՈՒՅՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան /նկարագրական մաս/.

Քաղաքացի Յուրի Հայրապետյանի՝ ներկայացված հողամասի հատակագիծը հաստատելու և ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաաժանման կողմից տրված տեղեկանքը պարզաբանելու մասին դիմումի և կից հատակագծերի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական վարույթ՝ Յուրի Հայրապետյանի կողմից ներկայացված հողամասի հատակագիծը հաստատելու հարցը և նշված հողամասի վրա առանց քաղաքաշինական հաստատված փաստաթղթերի ինքնակամ շինություն կատարելու հարցը քննարկելու նպատակով:

Գործի քննության ընթացքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը /պատճառաբանական մաս/.

Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի և քաղաքացի Յուրի Հայրապետյանի միջև 2002թ. նոյեմբերի 11-ին կնքվել է պետության սեփականությունը հանդիսացող հողային տարածքների վարձակալության պայմանագիր ըստ որի վարձակալ Յուրի Հայրապետյանի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանն է հանձնվել 0,351 հա հողային տարածքը, որը գտնվում է Կոտայքի մարզ Ակունք համայնքի 13 փողոցի թիվ 1 հասցեում:

20.04.2018թ. Յուրի Հայրապետյանը դիմում է ներկայացրել Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարին՝ <Գեոդեզիա և քարտեզագրություն> ՊՈԱԿ-ի կողմից կատարված չափագրումների արդյունքում կազմված հողամասի հատակագիծը հաստատելու և ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաաժանման կողմից տրված տեղեկանքը պարզաբանելու խնդրանքով: Նշված հողամասի հատակագծին կից ներկայացվել է նաև նույն ՊՈԱԿ-ի կողմից կազմված՝ վարձակալած հողամասի վրա կառուցված ինքնակամ շինությունների հատակագծերը:

Յուրի Հայրապետյանի դիմումին կից ներկայացված փաստաթղթերի՝ թիվ 0163498 սեփականության վկայականի և ներկայացված հատակագծերի ուսումնասիրություններից պարզվեց, որ սեփականության վկայականով, շենքի տվյալներ բաժնում օգտագործման նպատակը տողում նշված է <պահակատուն>: Համաձայն ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 818 որոշման այդ հողատարածքը համընկնում է թիվ 2669033 սեփականության գրանցման վկայականով Ակունք համայնքի սեփականությունը հանդիսացող 38 քմ տարածքով հողակտորի հետ, որի ՀՀ կառավարության 14.03.1997թ. համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին թիվ 51 որոշման համաձայն համայնքին է փոխանցվել ներհամայնքային նշանակության ջրամատակարարման համակարգը, որի մեջ ներառվում է թվով երեք, այդ թվում վերը նշված պոմպակայանները: Նշված պոմպակայանը այլընտրանքային ջրամատակարարման նպատակով ծառայում է Ակունք համայնքի բնակիչների խմելու ջրի ապահովմանը: Պոմպակայանը տեղակայված է խորքային հորի վրա և հագեցված է ջրհան սարքերով:

Ըստ 2002թ. նոյեմբերի 11-ին կնքված պետության սեփականությունը հանդիսացող հողային տարածքների վարձակալության պայմանագրի 4.4.4 կետի, այն է՝առանց վարձատուի գրավոր համաձայնության՝չկատարել վարձակալած հողատարածքի որևէ վերապլանավորում կամ վերասարքավորում, բացի այդ նույն պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել հողային տարածք, որը գտնվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքում՝լճի սպասարկման նպատակով, իսկ նույն պայմանագրի 4.4.2 կետի համաձայն վարձակալը պարտավոր է հողատարածքն օգտագործել բացառապես պայմանագրի և հողատարածքի նշանակությանը համապատասխան:

Ուսումնասիրելով Յուրի Հայրապետյանի դիմումին կից ներկայացված շինությունների հատակագծերը պարզվեց, որ վերջինիս կողմից ինքնակամ շինությունները կատարվել են վարձակալած հողակտորի վրա, իսկ ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 818 որոշմամբ տվյալ տարածքը փոխանցվել է Ակունքի համայնքապետարանին ի սեփականություն, որպես ջրային հող:

Կոտայքի մարզի Ակունք համայնքապետարանի աշխատակազմում հարուցված վարչական վարույթի քննության շրջանակներում 2018թվականի մայիսի 10-ին նշանակված վարչական վարույթի լսումներին Յուրի Հայրապետյանը չի ներկայացել և դիմումով հայտնել է, որ ցանկանում է

վարույթին ներգրավվել լիազոր ներկայացուցչի, որի դեպքում անհրաժեշտություն է առաջանալու ծանոթանալ վարչական վարույթի նյութերին և խնդրել է վարչական վարույթի ժամկետը երկարաձգել երկշաբաթյա ժամկետով: Վարչական մարմնի 10.05.2018թ. վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին որոշմամբ ժամկետը երկարաձգվել է 10 օրով՝ մինչև 21.05.2018թ. ժամը 10:00-ն: Նշված որոշումը, նկատի ունենալով, որ Յուրի Հայրապետյանը խնդրել է ուղարկել փոստով՝ պատվիրված նամակով ուղարկվել է վերջինիս, սակայն վերադարձվել է համայնքապետարան <չպահանջված> նշումով: Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի 21.05.2018թ. վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին որոշմամբ վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է ևս 10 օրով՝ մինչև 31.05.2018թ. ժամը 15:30-ը: Նշված որոշումը դարձյալ պատվիրված նամակով ուղարկվել է Յուրի Հայրապետյանին /դարձյալ ետ է վերադարձվել համայնքապետարան, այս անգամ՝<բացակայում է > նշումով և բացի դա տեղադրվել է <azdarar.am > կայքում: Յուրի Հայարապետյանը տեղյակ լինելով իր դիմումի համաձայն Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի մասին, 31.05.2018թ. նշանակված վարչական վարույթի լսումներին դարձյալ չի ներկայացել:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդհոդվածի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը,անկախ նրանից, թե ով է այն կառուցել:Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը: Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով,որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման, իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
Հայաստանի Հանրապետության կատավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման IVգլխի 33 կետի համաձայն համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: Նույն որոշման 2-րդ կետի <բ> ենթակետի համաձայն սահմանվել է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝ որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:
Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար սահմանված է վարչական պատասխանատվություն:
<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և

ցանկացել է դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվեկ էր վարչական տույժ:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասերի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածը <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ, 58-րդ և 78-րդ հոդվածների դրույթները՝ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին կետով, 10-րդ հոդվածով, 32-րդ հոդվածով, 40-րդ, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 245-րդ, 279-րդ հոդվածներով և 219[1]-րդ հոդվածով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ

հոդվածով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով որոշում եմ.

1. Քաղաքացի Յուրի Միքայելի Հայրապետյանի՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքի 13-րդ փողոցի թիվ 1 հասցեի <<Գեոդեզիա և քարտեզագրություն>> ՊՈԱԿ-ի կողմից կատարված չափագրումների արդյունքում կազմված հողամասի հատակագծի հաստատումը մերժել:
2. Քանդել սույն որոշման 1-ին կետում նշված՝ Կոտայքի մարզի Ակունք համայնքի 13-րդ փողոցի թիվ 1 հասցեում, համապատասխան քաղաքաշինական
   փաստաթղթերի կառուցված ինքնակամ կառույցները:
3. Յուրի Հայրապետյանին ենթարկել վարչական պատասխանատվության <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք 200.000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
4. Պարտավորեցնել Յուրի Հայրապետյանին տուգանքի գումարը վճարել Ակունքի համայնքապետարանի հաշվարկային հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը և կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին՝երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՈՒԲԵՆՅԱՆ**

20 13 թ. 31

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 91

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, որոշում եմ՝

1.Ակունքի համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 23-ի «Ակունքի համայնքապետարանի 2018 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 2 որոշման մեջ կատարել փոփոխություններ .

1) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20/8 թ. հունիսի 01
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 92

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրամանը,որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը համաձայն հավելված 1 և հավելված 2-ի :

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2016թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերի հաստատման մասին » թիվ 8 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2018 թ. հունիսի 04
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 93

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Համայնքային ծառայության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի որոշում եմ՝

1. Հաստատել Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2016 թվականի ապրիլի 26-ի «Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին » N 20 որոշումը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20/8 թ. հունիսի 04
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
Կենտրոնական խճուղի 72,
akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2018 թվականի N 94

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9, 10, 11 և 15-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով,որ քաղաքացի Արմեն Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող 07-040-0027-0002 ծածկագրով հողամասում համաձայն «ԳՈՒՅՔԱՉԱՓ» ՍՊԸ -ի կողմից տրամադրված չափագրումների ինքնակամ կառուցված 100.26 քմ մակերեսով բնակելի տան, 8.04քմ մակերեսով բպ-ի, 52.49քմ մակերեսով խորդանոցի, 8.64քմ մակերեսով խորդանոցի, 15.38 քմ մակերեսով հացատան, 77.74քմ մակերեսով անասնաշենքի և 17.68 քմ մակերեսով ծածկարանի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավուքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառոցված չեն քաղաքաշինության նորմերի էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Բաղդասարյանի դիմումը որոշում եմ '

1. Արմեն Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Ակունք գ.Հատիս 4-րդ փողոց 1-ին 1-ին նրբանցք թիվ 1 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված 100.26քմ մակերեսով բնակելի տունը, 8.04քմ մակերեսով բպ-ն, 52.49քմ մակերեսով խորդանոցը, 8.64քմ մակերեսով խորդանոցը, 15.38քմ հմակերեսով հացատունը, 77.74քմ անասնաշենքը և 17.68 քմ մակերեսով ծածկարանը համարել օրինական:

2. Պարտավորեցնել Արմեն Բաղդասարյանին օրինականացման համար համայնքային բյուջեի 900105203211 հաշվեհամարին կատարել վճարում 8,64քմ մակերեսով ինքնակամ կառուցված խորդանոցի համար՝ 2855դրամ և 17,68քմ մակերեսով ինքնակամ կառուցված ծածկարանի համար՝ 5835դրամ, ընդհամենը՝ 8690 դրամ:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում վճարումները կատարելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 18 թ. 04

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 95

ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի ,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի եզրակացությունը՝ 2018 թվականի հունիսի 5-ին Ակունքի համայնքապետարանում կայացած մրցույթում Հասմիկ Վարուժանի Մելքումյանին հաղթող ճանաչելու վերաբերյալ, որոշում եմ '

1. Հասմիկ Վարուժանի Մելքումյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետի պաշտոնին ծածկագիր (2.1-1) :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 18 թ. հունիսի 07
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 96

ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի եզրակացությունը՝ 2018 թվականի հունիսի 5-ին Ակունքի համայնքապետարանում կայացած մրցույթում Մարոզ Դիլֆինի Սարիբեկյանին հաղթող ճանաչելու վերաբերյալ, որոշում եմ '

1. Մարոզ Դիլֆինի Սարիբեկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանի աշխատակազմի քարուղարի պաշտոնին ծածկագիր (1.2-1):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2018 թ. հունիսի 07
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 97

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ի 21-րդ մասի որոշում եմ՝

1. Ակունքի համայնքապետարանի կարիքների համար <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/02>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու համար սահմանել պատասխանատու ստորաբաժանում.

1) ղեկավար՝ Վլադիկ Աբրահամյան,

2) անդամ՝ Գուհարիկ Ազիզյան,

3) անդամ՝ Հենրիկ Սարգսյան

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2018 թ. հունիսի 07
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 98

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով,ղեկավարվելով«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով. որոշում եմ՝

1. Հաստատել Ակունք համայնքի.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդիկազմը ՝ համաձայն հավելվածN 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը ՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

3) մինչև սույն թվականի հունիսի 15-ը մշակել Ակունք համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

4) յուրաքանչյուր տարվա համար Ակունք համայնքում իրականացնել համայնքիԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ Վ.Աբրահամյանին՝ սույն հրամանի 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20/18 թ. հունիսի 08
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 99

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով. որոշում եմ՝

1.Հաստատել «Ակունք համայնքի աղետների ռիսկերի կառավարման պլանը» համաձայն 1-15 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20/8 թ. հունիսի 08

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 100

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ի 6-րդ կետի, որոշում եմ՝

1. Սահմանել <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/02>> ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմը՝ հետևյալ անդամներով.

նախագահ՝ Մարոզ Սարիբեկյան

անդամ՝ Մանիշակ Հովհաննիսյան

անդամ՝ Հասմիկ Մելքումյան

քարտուղար՝ Սիլվա Գրիգորյան

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 18 թ. հունիսի 08
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 101

ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան /նկարագրական մաս/

Քաղաքացի Մայրանուշ Հայրապետյանի ներկայացուցիչ՝ Գոռ Գրիգորյանի՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ դիմումի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի հիմքով կոտայքի մարզի Ակունք համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ՝ դիմումում նշված հարցը քննարկելու նպատակով:

Գործի քննության ընթացքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ ևօբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը /պատճառաբանական մաս/.

Մայրանուշ Հայրապետյանի ներկայացուցիչ՝ Գոռ Գրիգորյանը դիմում է ներկայացրել Կոտայքի մարզի Ակունք համայնքի ղեկավարին՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ, խնդրելով Մայրանուշ Հայրապետյանի և նրա ընտանիքի անունով սեփականաշնորհված 07-049-250-026 կադաստրային ծածկագրով 3450 քմ մակերեսով հողակտորի նկատմամբ վերականգնել մինչև Գ. Թադևոսյանի կողմից թույլ տրված հանցավոր անփութությունը եղած դրությունը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժնի ավագ հետաքննիչ՝ Հ. Հունանյանի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 07.11.2009թ. որոշմամբ հաստատվել է, որ 2002թ. համայնքների կադաստրերի քարտեզագրման ժամանակ Նոր-Գյուղի բնակիչ՝ Մայրանուշ Հայրապետյանի ընտանիքին 1991թ. սեփականաշնորհված 3450քմ վարելահողը /կադաստրային ծածկագիր 07-049-250-026/ թյուրիմացաբար գրառվել է Մ. Վարդանյանի ընտանիքի անվամբ և Նոր-Գյուղի համայնքի

ղեկավար՝ Գ. Թադևոսյանը ծառայողական պարտականությունների նկատմամբ ցուցաբերելով անբարեխիղճ վերաբերմունք հաստատել է կադաստրային քարտեզը, առանց սեփականաշնորհման ակտերի հետ համեմատելու և համայնքի ցուցակը ուղարկել է կադաստր, որտեղ արդեն Մ. Հայրապետյանի վարելահողի ծածկագիրը նշված է եղել Մ. Վարդանյանի ընտանիքի անվամբ և որի հիման վրա էլ վերջինիս տրվել է Մ. Հայրապտյանին պատկանող վարելահողի սեփականության վկայականը:

Նույն որոշմամբ Միեր Վարդանյանի դիմումով նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ:

Վարչական վարույթի լսումներին ներկայել են Մայրանուշ Հայրապետյանը և Գոռ Գրիգորյանը: Վերջինս խնդրեց դիմումը բավարարել 2009թ. նոյեմբերի 7-ի քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման հիմքով:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 18 հոդվածի համաձայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտի հրապարակման հետևանքով քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատճառված վնասները հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Նույն օրենսգրքի 1063 հոդվածի համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 41 հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ դատավճռով:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքին համապատասխան»:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 69 հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ճանաչման հայցով հայցվորը կարող է

պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում;

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 96-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել:

ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/3280/05/09 որոշմամբ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որից հետո միայն անձը պարտավոր է նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադասության կամ դատական կարգով:

Տվյալ դեպքում դիմումատուն չի ներկայացրել օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով ոչ իրավաչափ է ճանաչված Նոր-Գյուղ համայնքի ղեկավար՝ Գրիշա Թադևոսյանի գործողությունը կամ անգործությունը:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 69 հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 96-րդ հոդվածը, 102-րդ հոդվածը, որոշում եմ

1. Քաղաքացի Մայրանուշ Հայրապետյանի ներկայացուցիչ՝ Գոռ Գրիգորյանի՝ Նոր-Գյուղի համայնքի ղեկավար՝ Գ. Թադևոսյանի ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը և կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 __ թ. _____

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 102

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջների ,հիմք ընդունելով Ակունքի համայնքի ավագանու 2018թվականի հունիսի 8-ի թիվ 35 որոշումը և հաշվի առնելով կառույցը իրականացված Անուշ Հրաչի Գրիգորյանի դիմումը . որոշում եմ

1. Ակունքի Համայնքային սեփականություն հանդիսացող՝/անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 03042018-07-0056 վկայական/ ,Կոտայքի մարզ Ակունքի համայնք գ.Զառ Ս.Կարապետի փողոց թիվ 21 հասցեի 130.8 քմ հողը ,նպատակային նշանակությունը 'բնակավայրի,գործառնական նշանակությունը'բնակելի կառուցապատման ,ուղղակի վաճառքի միջոցով օտարել Անուշ Հրաչի Գրիգորյանին 105 948 դրամով:

2. 130.8 քմ հողամասի վրա գտնվող շինությունները ՝արտաքին մակերեսով 65.92քմ բնակելի տունը , 26.72 քմ ծածկոցը և 38.16 քմ օժանդակ շինությունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել Անուշ Հրաչի Գրիգորյանին 431 640 դրամով :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 18թ. հունիսի 14
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 103

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33,34,35 կետերի պահանջներով ,հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018թվականի հունիսի 8-ի N 35 որոշումը և քաղաքացի Վրեժ Հակոբյանի դիմումը . որոշում եմ '

1.ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նորգյուղ 1/1 փողոց թիվ 2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող /կոդ 07-049-0287-0032 կադաստրային ծածկագրով/ 0.059072հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա առկա 156.77քմ.շինությունները գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի եղանակով, սեփականության իրավունքով օտարելկառույցը իրականացրող քաղաքացի Վրեժ Հակոբյանին, հետևյալ գներով՝

1)համայնքի սեփականություն 0.059072հա բնակելի կառուցապատման հողամասը (590,72քմ. X 1242դրամ) =733675 ՀՀ դրամ.

2) ավտոտնակ (107,21քմ. արտաքին չափերով) 107,21քմ.x1300=139373 ՀՀ դրամ.

3) օժանդակ շինություններ (75.66քմ. արտաքին չափերով) 75.66քմ.x2600դրամ= 196.716 ՀՀ դրամ.

4.Ընդամենը 1069764 ՀՀ դրամ:

5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 29 մարտի 2018թվականի <<Համայնքային սեփականություն համարվող հողամասը և շինությունները ուղղակի վաճառքի եղանակով օտարելու մասին>> N 46 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 18 թ. հունիսի 12.

գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 104

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, որոշում եմ՝

1.Ակունքի համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 23-ի «Ակունքի համայնքապետարանի 2018 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 2 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2018 թ. հունիսի 12
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 105

ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Ակունքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 55-Ն որոշման 2-րդ կետի որոշում եմ՝

1. 05 բաժնի 01 խմբի 1 դասի << Աղբահանում>> ծրագրի 4252 հոդվածից 150 000 դրամ 2-րդ եռամսյակից տեղափոխել 05 բաժնի 01 խմբի 1 դասի 4264 հոդված:

2. 06 բաժնի 4 խմբի1 դասի <<Փողոցային լուսավորություն>> 4269 հոդվածից 100 000դրամ տեղափոխել 2-րդ եռամսյակից:

3. 05 բաժնի 1 խմբի 1 դասի << Աղբահանում>> ծրագրի4637 հոդվածի 2-րդ եռամսյակիից 220 000 դրամ տեղափոխել 06 բաժնի 4խմբի1 դասի <<Փողոցային լուսավորություն>> ծրագրի 4269 հոդված:

4. 05 բաժնի 1 խմբի 1 դասի << Աղբահանում>> ծրագրի4637 հոդվածի 2-րդ եռամսյակիից 230 000 դրամ տեղափոխել 04 բաժնի 5խմբի1 դասի <<Ճանապարհային տրանսպորտ>> ծրագրի 4251 հոդված:

5. 04 բաժնի 2 խմբի 4 դասի << Ոռոգում>> ծրագրի 4213 հոդվածի 2-րդ եռամսյակիից 200 000 դրամ տեղափոխել 06 բաժնի 04խմբի1 դասի <<Փողոցային լուսավորություն>> ծրագրի 4251 հոդված:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20 թ. հունիսի 12
գ. Ակունք